



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

05.03.2020թ  
Ե/096-2020

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 06-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 6 էջ::

Համայնքի ղեկավար՝

Ա. Փիլոյան



## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Սարահարթ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը   | Օրը         | Ժամը  | Անցկացման վայրը   |
|----------|------------------------|-------------|-------|---|
| Սարահարթ | Ավագանու արտահերթ նիստ | 06.03.2020թ | 15:00 | Սարահարթի համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 12) |

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2020Թ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 06-ի նիստի օրակարգը:

1. Սարահարթ համայնքի ավագանու 2020թ մարտի 06-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

2. Համայնքային սեփականության հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

3. Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման փաստաթղթերում լրացում կատարելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

4. 06-097-0032-0050 ծածկագրի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Արտուշ Ոսկանյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

5. ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

Համայնքային սեփականության  
հողամասը աճուրդ  
վաճառքով օտարելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 1-ին կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Տալ համաձայնություն Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակության այլ հողատեսքի հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**06-097-0136-0015** կադաստրային ծածկագրով, 1.004 հա մակերեսով, 1300 000 /Մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ մեկնարկային գնով, լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, քայլի չափը 65000 ՀՀ դրամ, նախավճարը սահմանել 65000 դրամ:

2.Տալ համաձայնություն Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակության վարելահողը աճուրդ վաճառքով օտարելու մասին Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**06-097-0108-0023** կադաստրային ծածկագրով, 0.37191 հա մակերեսով, 550000 /հինգ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ մեկնարկային գնով, լոտի մասնակցության վճարը սահմանել 5000ՀՀ դրամ, քայլի չափը 27500 ՀՀ դրամ, նախավճարը սահմանել 27500 դրամ:

Սարահարթ համայնքի համայնքային  
սեփականության գույքի գույքագրման  
փաստաթղթերում լրացում  
կատարելու մասին

---

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության  
օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման  
փաստաթղթերում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի

06-097-32-0050 ծածկագրի տակ գտնվող  
համայնքային սեփականություն  
հանդիսացող հողամասը Արտուշ Ոսկանյանին  
ուղղակի վաճառքով օտարելու մասին

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 72-րդ հոդվածի 1-ին 2-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ թվականի թիվ 912-ն և ՀՀ կառավարության 12.04.2001թ թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգերով հիմք ընդունելով Սարահարթ համայնքի բնակիչ Արտուշ Ոսկանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 02032020-06-0034 վկայականը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ հողամասի հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, համայնքի ավագանին

#### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող 06-097-0032-0050 կադաստրային ծածկագրով, 0.01523հա մակերեսով, 2փ թիվ 20 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը 22000 / քսաներկու հազար / ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարել Արտուշ Ոսկանյանին:

**ՀՀ պետական բյուջեից նպատակային  
հատկացումներ ստանալու նպատակով 2020 թ  
բյուջետային ֆինանսավորման  
ծրագրին մասնակցելու մասին**

---

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով, Սարահարթ համայնքի  
ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում առկա խնդիրների լուծման նպատակով  
(հայտ 1, հայտ 2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային  
հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով մասնակցել 2020 թվականի  
բյուջետային ֆինանսավորման ծրագրին :